ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է ԴԴ-ԲԸԱՀ-ԾՁԲ-ՀՓ/16-01 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի արդյունքում 2016թ-ի հունվարի 22-ին կնքված թիվ PD-63-01-16 պայմանագրում 2016թ-ի մարտի 22-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով նախատեսված ծառայության ծավալի ավելացում:

Փոփոխության նկարագրություն: Պայմանգրի գնի փոփոխություն:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 10.02.11թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 60-րդ կետի 2-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Զվարթ Աբգարյանին:

Հեռախոս՝ 010-511-788:

Էլ. փոստ՝ datgnumner@mail.ru:

Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝ -:

Պատվիրատու՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ

Լրացուցիչ համաձայնագիր թիվ 1

22.01.2016թ.-ին կնքված թիվ PD-63-01-16

Փոստային կապի, փոստային կապի հետ կապված
սուրհանդակային կապի և օժանդակ ծառայությունների վճարովի մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան «22-ը» մարտի, 2016թ.

«ՀԱՅՓՈՍՏ» Փակ բաժնետիրական ընկերությունը, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության օրենքներին համաձայն և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատոր (այսուհետ՝ Ընկերություն)՝ ի դեմս Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար Հայկ Ավագյանի, մի կողմից, և **Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմը (այսուհետ՝ Հաճախորդ)՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Ասլանյանի**, մյուս կողմից, կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 22.01.2016թ.-ին կնքված թիվ PD-63-01-16 Փոստային ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Պայմանագրի 3.3. կետով «սահմանվում է» բառից հետո **«22 345 800 (քսաներկու միլիոն երեք հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն»** բառերը փոխարինել **«23 532 500 (քսաներեք միլիոն հինգ հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն»** բառերով:

2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 22.01.2016թ.-ին կնքված թիվ PD-63-01-16 Փոաստային ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:

3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:

4.Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող (4) օրինակից: Համաձայնագրի 3 (երեք) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:

5.Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Ընկերություն՝

«Հայփոստ» ՓԲԸ
ք.Երևան, Սարյան 22
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՀ 1930003703156000
ՀՎՀՀ 02507464
Հեռ.՝ /010/ 514-548

Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար՝

---------- Հ. Ավագյան

Հաճախորդ՝

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմ
ք.Երևան, Տիգրան Մեծի 23/1
ՀՎՀՀ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011299055
Հեռ.՝ /010/ 54-79-18

Աշխատակազմի ղեկավար՝

---------- Ա.Ասլանյան